

# ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՍԵՐՀԱՏՈՒԹԻՒՆԸ

ԲԺ. ԹԱՂԵՌՈ ԶԱՔԱՐԵԱՆՑԻ

## Ա

Սերհատութիւն ասելով մենք կամենում ենք արտայացաել կենդանի կազմածքի այն կենսաբանական (բիոլոգիական) դրութիւնը, երբոր նա կորցնում է կենդանութեան գլխաւոր հիմունքներից մէկի—որդեծնութեան—ընդունակութիւնը:

Բոլոր կենդանական աշխարհը՝ սկսած ամենամանը կազմածքից, որը, մի քանի հարիւր անգամ խոշորացոյցի տակ մեծացնելուց յետով հազիւ միայն նկատելի է լինում, մինչև վիթխարի փիղը, ենթարկւում են այն մեծ տիեզերական օրէնքին, որ անւանում է «Գոյութեան կռիւ» և որը առաջին անգամ պարզեց անդիացի Չարլզ Դարվինը:

Երկու խօսքով պարզենք այդ տիեզերական օրէնքի միտքը: Ամեն մի կենդանի կազմածք աշխատում է պահպանել իւր անհատական գոյութիւնը աշխարհի վրայ: Այդ նպատակին հասնելու համար նա ստիպւած է պաշտպանել իւր կեանքը հազար ու մի տեսակ պայմանների դէմ, որոնք ամեն բովէ սպանում են նրա գոյութիւնը. նա ստիպւած է պաշտպանել այն կենդանիների դէմ, որոնք կերակրուում են նրա մարմով, այն կենդանիների դէմ, որոնք խլում են նրանից իւր սնունդը: Նա ստիպւած է դիմանալ

1) Ռուսաց વարջածությունը կամ վայրացությունը, եւրոպացոց dégénérescence բառերը մենք թարգմանում ենք սերհատութիւն՝ խօսքով, որ կազմում ենք սերեկ (սերունդ) և հասմնել (վերջանալ) բառերից:

կլիմայի խստութիւններին, երկրի անյաջող պայմաններին, քաղցին, ծարաւին և այլն։ Այդ երեսով է որ անւանում է գոյութեան կուր և որից յաղթող են դուրս գալիս միմիայն այն անհատները, որոնք իրանց թէ փիզիքական և թէ հոգեկան կարողութիւններով ընդունակ են յաղթել ներկայացող վտանգներին և կամ խուսափել նրանցից։

Բայց ամեն մի անհատ, ինչքան էլ որ նա ընդունակ և գօրաւոր լինի, չի կարող իւր անհատական գոյութիւնը շարունակել յաւիտեան, որովհետև անհատական կեանքը ունի սահման և այդ սահմանն է անխուսափելի մահը։ Այդ պատճառով անհատը աշխատում է շարունակել իւր գոյութիւնը սերնդի մէջ, առաջացնելով իւր նման անհատներ և հաղորդելով նրանց իւր առւանձնապատկութիւնները։ Սեռունդ առաջացնելը վերին կարգի կենդանիների մէջ կատարում է տարբեր սեռերին պատկանող երկու անհատների փոխադարձ յարաբերութեամբ։ Սեռերի այդ տարբերութիւնը սեղի է տալիս «սեռական կուին», երբոր արական անհատը սովորած է խլել իւր նմանից իգական սեռի անհատին։ Բայցի սրանից, նա աշխատում է գտնել այնպիսի գուգակից, որը կարող է ժառանգաբար հաղորդել սերնդին աւելի զօրաւոր ընդունակութիւններ։ հետեաբար նա կատարում է այն՝ ինչ որ Դարւինը անւանում է «սեռական ընտրողութիւն»։

Այդ ընտրողութեան յաջողութիւնից է կախւած սերնդի յարատեսութիւնը։ Թոյլ անհատները առաջացնում են թոյլ սերունդ, որը, անընդունակ լինելով դիմանալ շրջապատող վտանգներին, վայր է ընկնում գոյութեան կուի մէջ։ Այդ անկումը արտայայտում է կամ անհատի անմիջական մահով և կամ նրանով, որ, թէև անհատը շարունակում է ապրել, բայց կորցնում է սերունդ առաջացնելու ընդունակութիւնը։

Ահա այդ դրութիւնն է, որ մենք անւանեցինք սերնատութիւն։ Դառնանք ուրեմն սերնատութեան խնդրին։

Նոյն իսկ առօրեայ կեանքի մէջ յաճախ մենք վկայ ենք լինում մասնաւոր ընտանիքների սերնատութեան։ Եւ ոչ միայն մասնաւոր ընտանիքներ այլ և ամբողջ գիւղեր և հասարակութիւններ

մեր աչքի առաջ սերհատւում են, թողնելով իրանց ետևից ընդարձակ աւերակներ իրրե ապացոյց այն կռւի, որը տարիների և դարերի ընթացքում տեղի է ունեցել այդուեղ գոյութեան համար: — Նոր-Գելանդիայի և Աւստրալիայի բնիկները, Ամերիկայի կարմրակաշիները այժմ կամ բոլորովին անհետացել են կամ մօտ են անհետանալու: Վերջին տասնեակ տարիների ընթացքում նոյն իսկ քաղաքակիրթ ֆրանսիայում ծննդաբերութիւնը այն աստիճան նւազել է որ շատերը սկսել են կասկածանքով նայել այդ մեծ ժողովրդի ապագայի վրա: — Lagneau՝ 1885 թ. ֆրանսիական Ակադեմիային ներկայացրած զեկուցումից երեսում է որ ֆրանսիայի 37 դէպարտամենտներում (նահանգ) տարեկան մեռնողների թիւը աւելի մեծ է քան թէ ծնւողներինը. իսկ մասցած դէպարտամենտներում Բողիօի վիճակագրութեան համեմատ ծնւողների թիւը այնպէս է վերաբերում մեռնողների թւին ինչպէս 25,8 : 24,0. մինչդեռ Ռուսաստանում այդ յարաբերութիւնն է 49,5 : 36,7, Պրուսիայում 38,7 : 27,2, Անգլիայում 35,6 : 22,0<sup>1)</sup>:

Միենոյն երեսով աւելի ևս լայն չափով նկատւում է նաև կենդանիների և բոյսերի աշխարհում: Հնագիտութիւնը (պալէոնտոլոգիա) մինչև այսօր համար ում են վերջնականապէս անհետացած: Ուր են այն հսկայ խլէզները, վիթխարի մամութները, յաղթանդամ իլսթիոզաւրները և մաստոդոնները, առիւծների և վագրերի ցեղակից մախայրոդոնները, որոնց կմակները միայն այսօր գտնւում են երկրի խորաւոր շերաբրում և որոնց գոյութիւնը վերաբերում է նախապատմական ժամանակներին: Զկան շատերը նոյն իսկ այն կենդանիներից, որոնց ցիշատակը դեռ կենդանի է մօտաւոր տարեգրութիւնների մէջ: Այդպէս են Եւրոպայի փաստարացին արջը և քաւթառը, հիւսիսային հսկայ եղջերուն և վերջապէս ծովային կովը, որը դեռ ևս 18-րդ դարում նկարագրւած է Շոելէրի ձեռքով: Օրէցօր նւազում է նաև կէտերի և փոկերի

<sup>1)</sup> Տես պրոֆ. Թիկվալդъ—Къ вопросу объ уменьшении смертности въ Россіи, էջ 8.

թիւը, որոնցով մի ժամանակ այնքան առատ էին հիւսիսային ծովերի ջրերը:

Անհետացած կենդանիների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս որ նախապատմական ժամանակիներում այդ հսկայ կազմածքները առաջացել են աւելի թոյլ տեսակի կազմածքներից այն նշանաւոր օրէնքի հիման վրայ, որ անւանում է տեսակների ծագումն՝<sup>1)</sup>: Սկզբում նրանք եղել են աւելի թոյլ և աւելի սակաւթիւ. գոյութեան կռիւը ստիպել է նրանց զօրանալ և բազմանալ և, երբ այդ զարգացումը հասել է իւր զագաթնակետին, նրանք սկսել են կրկին թուլանալ, մանրանալ, սակաւանալ և վերջապէս սերհատուել: Խնչպէս որ ամեն մի կենդանի անհատի համար բնական է ծնւել, զարգանալ և մեռնել, նոյնպէս և ամբողջ կենդանական տեսակի համար ընդհանուր կենսաբանական օրէնք է՝ ծագել, զարգանալ և սերհատուել. մի օր էնք, որից զերծ չէ եղել և չի կարող լինել ոչ մի կենդանի տեսակ:

## Բ

Այժմ ինքն ըստ ինքեան հարց է ծագում թէ արդեօք ի՞նչ վիճակ է սպասում այն կենդանի տեսակին, որը կենդանաբանների

<sup>1)</sup> Մի որ և է կենդանի փոխելով իւր կեանքի պակմանները (տեղը, կլիման և ալին) ստիպած է, իւր գոյսութիւնը պահպանելու համար, արմարեցնել իւր կազմածքը այդ նոր պալմաններին. Այդ լարմարմերու ձգտումը առաջացնում է կենդանու կազմածքի մէջ մի շարք անպիսի փոփոխութիւններ, որոնք զգալի կերպով տարբերում են նորան իւր նախկին տեսակից. Այդ փոփոխութիւնները կատարում են ի հարկէ ոչ մի անգամից, այլ մի քանի սերունդների ընթացքում. Այդպէս է բացարում Դարւինը այն բազմաթիւ կենդանական տեսակների ծագումը, որոնք գոյսութիւն ունին ներկայ ժամանակ և որոնք ծագումն են առել մի ընդհանուր նախնական տեսակից. Դարւինը աղաւնիների վրա փորձեր անելով ցոյց տաեց որ մի տեսակ աղաւնուց մի քանի սերունդների ընթացքում կարելի է ստանալ մի քանի զանազան տեսակ աղաւնիներ տարբեր նախկին տեսակից. Այդ փորձերից հանճարեղ գիտնականը եղբակացրեց, որ եթէ մարդը աղքան կարծ միջոցում կարող է աղպիսի տարբեր տեսակներ առաջացնել, ինչու թոյլ չտալ, որ նոյնը կարող է կատարել նաև ընուզթիւնը միլիոնաւոր տարիների ընթացքում:

լեզով ասւում է բանական մարդ (homo sapiens) և որին Դիոգենէսը անւանում էր անփետուր երկոտանիւ իսկ Բիւֆոնը և նորագոյն բանաստեղծ-փիլիսոփաները անւանում են «բնութեան թագաւոր, բնութեան թագն ու պսակ»: Միթէ այդ բանական արարածը պէտք է ենթարկւի նոյն թշւառ վիճակին, որին ենթարկւել են մամութները, մասդոդնոտները և իսլթիզաւները:

Վաթսուն, հօթանասուն տարի տառաջ մի այդպիսի հարց տալը մինչև անգամ անվայել էր համարւում մարդու արժանապատւութեան համար. բայց այժմ, երբ Լամարկի, Դարւինի, Հեօկոլինի, Ֆուտի, Հէկկէլի և ուրիշ գիտնականների շնորհիւ մարդը արդէն իջել է իւր առանձնաշնորհւած բարձրութիւնից և անցել է կենդանական տեսակների շարքը, այլ ևս տեղիք չկայ կամկածելու, որ բնութեան յաւիտենական օրէնքների առաջ հաւասարապէս պէտք է խոնարհւի նաև մարդկենդանին, թէև լինի նա բանական և խմաստուն:

Դեռ ևս Դարւինի նշանաւոր աշխատութիւնը տեսակների ծագման մասին լոյս չէր տեսած, երբ ֆրանսիացի բժիշկ Մորէլը, հիմնելով միմիայն հիւանդների վրայ արած ուսումնասիրութեան վրայ, եկել էր այն եզրակացութեան, որ շատ հիւանդութիւններ պատճառու են լինում սեռական զգացումների թուլութեան, որդենութեան նւազելուն և տեսակի սերհատութեան: Այդ ուսումնասիրութեան հետևանքն էր նորա նշանաւոր աշխատութիւնը «Մարդկային սեռի ֆիզիկական, մոտառ և բարոյական սերհատութեան մասին»<sup>1)</sup>, որը լոյս տեսաւ 1857 թւին և որը մինչև այսօր ևս չի կորցրել իւր հեղինակութիւնը: Մորէլից յետոյ այդ խնդիրը ենթարկւեց բազմակողմանի ուսումնասիրութեան թէ մարդաբանների (անտրոպոլոգ), թէ վիճակագիրների (ստատիստիկոս), թէ բնաբանների (նատուրալիստ) և թէ բժիշկների կողմից, որոնք հաստատելով մարդկային ցեղի սերհատուելու ֆակտը, միևնուն ժամանակ աշխատեցին պարզել այն պայմանները, որոնք նպաստում են այդ երևոյթին:

<sup>1)</sup> Morel—Traité des dégénérescences physiques, intellectuelles et morales de l'espèce humaine.

Այդ պայմանների մէջ առաջին տեղը բռնում են աշխարհագրական պայմանները, որոնք ամենից աւելի ընդհանուր, աւելի տարածւած և միևնուն ժամանակ աւելի անխուսափելի են:

Տաք երկրի բնակիչները, օրինակի համար նէգրները, ինչքան էլ որ իրանց երկրում առողջ և ամրակազմ լինին, այսու ամենայնիւ սառը երկիր փոխադրւելով սովորաբար վարակում են թոքախոռվ և մեռնում են: Մինչև անգամ բարեխառն կիմային նրանք դժւարութեամբ են սովորում, և թէև աւելի քիչ են հիւանդանում, բայց զգալի կերպով կորցնում են որդեճնութեան ընդունակութիւնը: Ամերիկական կուից յետոյ, երբոր նէգրները (1863 թ.) գերութիւնից ազատւեցին, ամենքը կարծում էին որ այժմ իրք ազատ քաղաքացիներ նրանք շուտով կածեն ու կը բազմանան. սակայն փորձը ցոյց տւեց որ ընդհակառակը տարէցտարի նրանց թիւը սկսեց նւազել, չնայելով որ շատերը պատկանում էին արդէն երկրորդ կամ երրորդ սերնդին. նմանապէս էսկիմոսները և ուրիշ բեւեռային ցեղերը չեն դիմանում ոչ միայն տաք կիմային, այլ սերհատուում են նոյն իսկ բարեխառն գոտու տակ: Ինչ որ վերաբերում է Հնդկա-եւրոպական ցեղերին, սովորաբար կարծում է որ նրանք ընդունակ են յարմարւել բոլոր կիմաներին. սակայն եւրոպական գաղթականութիւնների դարաւոր պատմութիւնը ցոյց է տալիս որ այդ կարծիքը սխալ է: Չորս՝ հարիւր տարուց աւելի է որ եւրոպացիներն սկսել են գաղթականութիւններ հաստատել տաք գոտու զանազան տեղերում: սակայն նրանց թիւը մինչև այսօր էլ այնքան աննշան է որ եթէ նոր գաղթողներ չլինեն, եղածներն էլ շուտով կանհետանան: 1652 թւին տասը հազար ֆրանսիացիք գաղթեցին Գւիանա. մի քանի տարուց յետոյ այդ բազմութեան հետքն անգամ չէր մնացել: Ֆրանսիական կառավարութիւնը նոյն փորձ կրկնեց նաև ներկայ դարուս վաթսունական թւականների սկզբում և դարձեալ նոյնապէս անյաջող<sup>1)</sup>:

Անգլիացիք, որոնք, ըստ երևոյթին ամենաղիմացկուն ժողովուրդն են, մինչև այսօր դեռ չեն կարողացել յարմարւել Հնդկաս-

<sup>1)</sup> Տես Ի. Ա. Օ խ ա տ ի ն Ե—Влияние расы на заболеваемость и аэклиматизацию.

տանի կլիմային, չնայելով որ այնտեղ նրանք շրջապատւած են կենսական ամեն տեսակ յարմարութիւններով։ Ամենաառողջ անդլիացի ծնողների զաւակները Հնդկաստանում սովորաբար լինում են այն աստիճանի ժողը և հիւանդոտ, որ ծնողները նրանց կեանքը պահպանելու համար ստիպւած են լինում նրանց փոխադրել Անգլիա։

Նոյնը պատահել է նաև հայերի հետ, որոնք մի ժամանակ բաւական մեծ քանակութեամբ գաղթած են եղել Հնդկաստան։ Ո՞ւր են Բոմբէյի, Մալբասի, Սուրաթի և Կալկաթայի բազմաթիւ հայ գաղթականները, որոնք մի ժամանակ պատել էին ամբողջ Հնդկաստանը և մինչև Յելլոն կղզին իրանց առևտրական տներով։ Եթէ կարելի լինէր ճիշտ վիճակագրական տեղեկութիւններ հաւաքել այդ հայերի մասին, այն ժամանակ կը տեսնէիք որ նրանք ոչ թէ կուլ են գնացել քաղաքակիրթ անդլիացիներին, ինչպէս որ սովորաբար կարծւում է, այլ ոչնչացել են շնորհիւ։ Հնդկաստանի անսովոր կլիմային, որի ազդեցութեան տակ շատերը մեռել են, շատերն էլ ենթարկել են սերհատութեան օրէնքին—կորցրել են աճելութեան ընդունակութիւնը։ Նոյն վիճակը սպառնում է անշուշտ նաև այն հայ գաղթականներին, որոնք մինչև այսօր շարունակում են զաղթել թէ դէպի սառը հիւսիս, թէ դէպի տաք Անդրկասպեան աշխարհը և թէ նոյն իսկ հեռաւոր Ամերիկա։ Այդ գաղթականները կորած են ոչ միայն ազգի այլ և մարդկութեան համար, որովհետև օտար հոգի, օտար կլիմայի տակ նրանք վերջ ի վերջ պէտք է օրհասական կերպով սերհատուն և բնաջին լինեն<sup>1)</sup>։

Քանի որ խնդիրը ֆիզիոլոգիապէս սերհատելու մէջն է, մենք պէտք է նկատենք, որ չորտածագիր բժ. Զաքարեանի կարծիքի հետ մենք համաձայն չենք, որ ինչ վերաբերում է Ամերիկակ գաղթող հակերին։ Կուլտուրապէս հիւսիսային Ամերիկակում շատ ազգերի գաղթականներ են կուլ գնացել անդլօ-ամերիկական տարրին, բայց նոցա ֆիզիքապէս սերհատելը ամեննեին ապացուցւած չէ, Ծնդհակառակը, եթէ տնտեսական պահմանները ներել են՝ զսողթողների սերունդը աճել է և ոչ նւազել, նոյն իսկ նեղբները, որոնք Ամերիկապէս են սերել, ներկալում Ամերիկակում թւով 8 միլիոն են, մինչդեռ հազիւ թէ դարերի ընթացքում անդամ նաւերով աղդքան հոգի փոխադրւած լինեն Ամերիկա։

Բժիշկ Օրժան, որ յայտնի է իւր ուսումնասիրութիւններով տաք երկրներում տիրապետող հիւանդութիւնների մասին, բացարձակ կերպով պնդում է որ Հնդկա-եւրոպական ցեղը ոչ մի ժամանակ կարող յարմարւել տաք գօտիների կլիմային: Որպէս զի եւրոպացին կարողանայ բոլորովին յարմարւած համարւել տաք կլիմային, ասում է նա, անհրաժեշտ է, որ նա միանդաման այլասեռեւ և ստանայ այդ կլիմայի տակ ապրող բնիկների ֆիզիքական յասկութիւնները. սակայն մինչեւ այսօր դեռ ոչ մի եւրոպացի, նոյն իսկ մի քանի սերնդից յետով, չէ այլասեռեւ և նէզը դարձել<sup>1)</sup>:

## Գ

Աշխարհադրական պայմանների մէջ մեծ նշանակութիւն ունի սերհատութեան վերաբերութեամբ երկրի դիրքը և բարձրութիւնը ծովի մակերեւոյթից: Խնչպէս յայտնի է, սարերի վրայ օդը աւելի նոսր է քան թէ ցած դաշտավայրերում: Այդ պատճառով, ինչքան աւելի վեր բարձրանանք ծովի մակերեւոյթից, այնքան աւելի նւազում է օդի ճնշողութիւնը և նրա մէջ պարունակւած թթւածնի քանակութիւնը: Պոլ Բէրի նշանաւոր փորձերը ցոյց են տալիս, որ 4.000—10.000 ոտնաչափ բարձրութեան վերաց թթւածնի քանանակութիւնը արեան մէջ պակասում է  $1/6 - 1/3$  անգամ, այսինքն, սովորական 20°/0-ի փոխանակ, արիւնը պարունակում է ընդամենը 16—13,5°/0 թթւածնի: Թթւածնի այդ պակասութիւնը ի հարկէ անհետեանք չի մնում բարձր սարերի վրայ ապրող ժողովրդի առողջութեան վրայ: Մինչդեռ առաջ կարծում էին, որ լեռնային կլիման նպաստում է կազմածքի զօրանալուն, նորագոյն փորձերը ընդհակառակը ցոյց են տալիս, որ երկրի բարձր դիրքը մեծապէս արգելք է լինում սերնդի բարւոքւելուն<sup>2)</sup>: Ժուրդանէն, ուսումնասիրելով Ամերիկայի բարձրութիւնների վրայ ապրող ցեղերը, եկաւ այն եղրակացութեան, որ լեռների բնակիչները՝ հնայելով շատ անգամ իրանց յաղթանդամ կազմածքին՝ աւելի թոյլ, աւելի սակաւարիւն են. հոգեպէս նրանք աւելի անզարդացած և աւելի անը-

<sup>1)</sup> Տես Դնևնիք Ռ-го съезда русскихъ врачей էջ 74:

<sup>2)</sup> Տես проф. Панутинъ—Общая патология Կ.р. 156, 138.

դունակ են քան թէ դաշտավայրերի բնակիչները. մեւնոյն ժամանակ լեռնականները աւելի դժւարութեամբ են դիմադրում զանազան հիւանդութիւններին. սուսական դրացմունքը նրանց մէջ աւելի ճնշւած է և որդենութիւնը նւազ<sup>1)</sup>:

Բելլշարժէի, կրիշբուլսէրի, Պանտիլիովի և ուրիշների բազմաթիւ հետազոտութիւնները ցոյց են տալիս որ լեռնացին կրծերում ապրող ցեղերը շատ անգամ ենթակաց են խածի<sup>2)</sup> (Յօն) և ապշութիւն (կրտինիզմ, աճուրդում) ասւած հիւանդութիւններին, որոնք նշան են ցեղի սերհատելուն: Այդ տեսակ հիւանդները կամ բոլորովին անշնդունակ են որդենութեան և կամ նրանց որդենութիւնը շարունակում է ամենաշատը երկու կամ երեք սերունդ: Ֆրանսիացի մի քանի լեռնոտ նահանգներում խածի ունեցողների թիւը համարում է հազարին՝ 73, իսկ ապուշներինը հազարին՝ 22<sup>3)</sup>: Ֆիւրինգիայում, Սիլեզիայում և Ալպեան սարերում այդ թիւը աւելի ևս մեծ է: Չափազանց տարածւած է խածին Սամարզանդի նահանգում, որտեղ բժ. Սռակաչէի ասելով, մի քանի դիւզեր երբեմն ամբողջապէս ենթարկում են այդ հիւանդութեան<sup>4)</sup>: Կովկասում խածին և ասլշութիւնը տարածւած են Օսետիայում, Սւաննետիայում, Դաղստանում և պարսկական Ղարաբաղի լեռներում. վերջինիս բնակիչները վաղուց արդէն յայտնի են ժողովրդին իրբեւ բժժամիաներ: Բժիշկ Պանտիլիովի վկայութեամբ Սւաննետիացի մի քանի տեղերում ապուշների թիւը համարում է մինչև 55<sup>0</sup>/<sub>0</sub>-ի, իսկ խածի ունեցողներինը 40<sup>3</sup>/<sub>0</sub>-ի<sup>5)</sup>: Հայաստանի նահանգներից յայտնի է լեռնային Սասունը իւր «Ճռերով» (Սասմայ Ճռեր), որոնք ուրիշ բան չեն բաց եթէ կրէտիններ (ապուշներ): Այն երկրներում, որտեղ

<sup>1)</sup> Տես Φλιογγε—Основыя гигиены երես 124—125:

Մասամբ սորանով կարելի է բացադրել, որ անցեալ տարւակ խոլերավի ժամանակ կովկասի ոչ մի նահանգը անքան զո՞ւ չտւեց, ինչքան լեռնոտ Դաղստանը.

<sup>2)</sup> Խածի ասւում է չնչափող առաջ գանւող մսանների ուռուցքը:

<sup>3)</sup> Տես De chambre—Dictionnaire des sciences médicales եր. 427:

<sup>4)</sup> Տես «Վրաչъ» 1893 № 17, երես 495:

<sup>5)</sup> Տես Пантюховъ—Автраполог, наблюденія на Кавказѣ 1893 երես 79:

տիրասպետում է ապշութիւնը իրրև տեղական հիւանդութիւն, այդ նշան է ժողովրդի սերհատութեան—ասում է հոգեկան հիւանդութիւնների յացտնի արոֆէսոր Կրաֆտ-Երինդը: Այդպիսի երկրի ժողովուրդը երկարակեաց չէ. նա անընդունակ է մոռաւոր և Փիզիքական աշխատութեան. որդեծնութիւնը նրա մէջ նւազ է, իսկ սերունդը ենթակայ մարմնաւոր պակասութիւնների, ջղացին և հոգեկան հիւանդութիւնների: <sup>1)</sup>

Այդպէս ուրեմն լեռնացին կլիման շնորհիւ թթւածնի պակասութեան և մի քանի ուրիշ սլայմանների, որոնց վրայ կանդ առնելը շատ հեռու կը տանէր մեզ, առաջացնում է մի շարք այնպիսի փոփոխութիւններ մարդու կազմւածքի մէջ, որոնք նպաստում են ցեղի նւազելուն և սերհատւելուն: Այդ վնասակար ազդեցութիւնը աւելի խիստ կերպով արտայայտում է մանաւանդ այն ցեղերի վերայ, որոնք, դարերի ընթացքում սովոր լինելով դաշտավայրերի կլիմացին, ստիպւած են լինում գաղթել լեռնացին երկիրներ: Այդ տեսակէտից տիսուր ապագայ է սպասում այն բազմաթիւ ռուս գաղթականներին, որոնք հարթավայր Ռուսաստանի խորքերից ամեն տարի գունդագունդ դիմում են դէպի Կովկասի լեռնացին նահանգները: Տէրութիւնը այդ գաղթականներին տեղ է տալիս սովորաբար այնպիսի լեռնադաշտերի վրայ (Ղարսի նահանգ), որտեղ դիրքի բարձրութեան շնորհիւ օդի ջերմութիւնը աւելի մօտ է Ռուսաստանի եղանակին. սակայն սրանով արգելք չէ դնւում այն վնասակար ազդեցութեան, որոնք առաջանում են օդի ճնշողութեան և թթւածնի քանակութեան նւազելուց. պայմաններ՝ որոնց անառվոր է դաշտացին Ռուսաստանի բնակիչը և որոնք ուրիշ պայմանների հետ միասին քայլ առ քայլ պէտք է առաջնորդեն նորան դէպի սերհատութիւնը: Դժբաղլաբար մենք ձեռքի տակ չունինք վիճակագրական տեղեկութիւններ այն ռուս գաղթականնութիւնների մասին, որոնք տեղի են ունեցել զեռ ևս ներկայ դարու սկզբներին. սակայն հիմնելով լոկ տեսական սկզբունքների վերայ, կարող ենք ասել որ եթէ այդ գաղթականնութիւնները չեն նւազել բաց և զգալի կերպով չեն աճել, չնայելով որ տնտեսապէս գտնել են

<sup>1)</sup> Տես Կրաֆտ-Թենիգը—Պսիխատրիք. II. Երես 248.

աւելի յաջող պայմաններում։ Յամենայն դէպս կարելի է պնդել, որ այդ գաղթականների սերունդը վիզիոլոգիապէս աւելի թուլ է քան բուն հայրենիքում ապրող ուստ ժողովուրդը։ Գեղեցիկ ապացոյց է ներկայացնում այդ օրէնքին Հայաստանի, Քուրդիստանի և Փաքր-Ասիայի լեռնոտ նահանգներում ապրող տաճիկ տարրը, այժմեան սերունդը այն մոնղոլների և թիւրքերի, որոնք ծնւած և մնւած էին Արալեան հարթավայր անապատների համար։ Ահա թէ ինչ է ասում նրանց սերհատութեան մասին յայտնի ուռւս ճանապարհորդ բժ։ Ելիսէեւը։ «Ճանապարհի բոլոր երկանութեան վրայ ես անդադար ուշադրութիւն էի դարձնում այն բազմաթիւ գերեզմանասների վրայ, որոնցով ծածկւած են Փոքր-Ասիայի լեռները և հովիտները։ Ես կարծում եմ որ իմ ճանապարհի վրայ գերեզմանատների թիւը գոնէ երեք անգամ աւելի էր քան թէ դիւզերինը և ես տիսրութեամբ պէտք է խոստովանեմ, որ այդ գերեզմանատները մեծ մասամբ փոււած են նախկին տաճկական գիւղերի աւերակների վրայ։ Այդ մեռելային սոսկալի յիշատակարանները ամենուրեք բարձրանալով Փոքր-Ասիայի տարածութեան վրայ, սլաշտոնական վիճակագրութիւններից աւելի պերճ կերպով վկայ են հանդիսանում թիւրք տարրի թէև դանդաղ բայց յարատե և օրհասական սերհատութեան»<sup>1)</sup>։

## ¶

Եթէ երկրի լեռնային դիրքը նպաստում է ազգերի սերհատութեան, առաջացներով խածի և ապշութիւն, դաշտային հովիտները ծնունդ են տալիս նոյնպէս հիւանդութիւնների, որոնք ոչ պակաս նպաստում են սերնդի նւազելուն։ Այդ հիւանդութիւններից մենք կը յիշենք միայն ճահճային տենդը (болотная лихорадка, մալариա), խոլերան և ժանտախտը (чума), որոնք կատարեալ պատոհասներ են մարդկային ցեղի համար։ Խոլերայի ծննդավայրը, ինչպէս յայտնի է, Բէնդալիան է և Գանդէսի դէլտաները։ Ժանտախտը զարգանում է գլխաւորապէս Եփրատ և Նեղոս գետերի բե-

<sup>1)</sup> Տես A. B. Ехисъевъ—Антропология. Экскурсия по перекъ Малой Азии երես 37.

րաններում և ալդտեղից երբեմն-երբեմն արշաւում է զէպի աշխարհի ամեն կողմերը: Խոլերայի վիշտակը, շնորհիւ անցած տարւայ համաձարակին, դեռ այնքան թարմ է, որ չարժէ երկար կանգ տունել նորա պատճառած ահազին վնասների վրայ. բաւական է եթէ միայն յիշենք, որ ներկայ դարուս սկզբից մինչև մեր օրերը մարդկութիւնը զոհել է խոլերային աւելի քան երեսուն միլիոն հողի: Բայց թէ մինչև որ աստիճան ժանտախտը և խոլերան ազդում են որդենութեան և սերնդի սերնատութեան վրայ՝ այդ հարցը դեռ ուսումնասիրւած է:

Այդ կողմից աւելի վտանգաւոր են տենդային հիւանդութիւնները, որոնք, Տորոսովի ասելով, զարգանում են ամեն տեղ, որտեղ կայ տաքութիւն, խոնաւութիւն և բուսականութիւն, այսինքն աշխարհի համարեա ամենամեծ մասում<sup>1)</sup>: Մորէի, Բիւրդէի, Մոնֆալկոնի, Կոմբարի, Տորոսովի և ուրիշ գիտնականների բազմաթիւ ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ տենդային հիւանդութիւնները երբեմն պատճառ են լինում ամբողջ ցեղերի և նահանգների զլխովին սերնատութեան: Տենդունների զաւակները լինում են վտիտ, դալլադէմ, կարճահասակ և թոյլ թէ մտաւորապէս և թէ ֆիզիկապէս: Նրանք կամ բոլորովին անընդունակ են որդենութեան և կամ նրանցից ծնւած զաւակները չեն կարողանում երկար ապրել: Տենդային հիւանդութիւնները մեր երկրում սաստիկ տարածւած են բոլոր մեծ գետերի—Երասխի, Կուրի, Ռիոնի, Թերերի և Կուրբանի հովիտներում, նոյնպէս և Սև ու Կասպիան ծովերի այն ափերում, որոնք հարուստ են բուսականութեամբ: Լենքորանի, Աղ-սուի, (?) Գեօկչայի գաւառները և Գութայիսի, Ելիզաւետապոլի և Երեանի նահանգների մի քանի մասերը կատարելապէս սերնատում են շնորհիւ ճահճացին տենդերի: Խոյնը նկատում է նաև Թերեքեան նահանգում: Վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ղզլար քաղաքը տարէցտարի այնքան նւազում է բնակիչներով, որ շատ երկար չանցած այդ հայաշատ քաղաքի միայն անունը մնացած կը լինի պատմութեան էջերում իրեւ մի աւելորդ

<sup>1)</sup> Տես Տօրոպօվъ—Օպытъ медиц. географіи Кавказа относительно перемежающихся лихорадокъ Կրմս 3.

ապացոյց այն զոհաբերութեան, որ հայ ժռղովուրդը արել է գաղթականութեան ախտին։ Նկատուած է նմանապէս որ ոչ մի տեղ կովկասում ծննդաբերութիւնը այնքան նւազ և ամուլ ամուսնութիւնների թիւը այնքան շատ չէ, ինչքան տենդային տեղերում։

Տենդային հիւանդութիւններից ոչ պահաս վնասակար են այն վարակիչ հիւանդութիւնները, որոնք կախումն չունին աշխարհագրական պայմաններից, այլ տարածւած են ամեն տեղ և ամեն ժամանակ։ Այդ հիւանդութիւնների շարքումն են հարինքը (տիֆ) իւր զանազան տեսակներով, ծաղիկը, կարմրուկը, բկացաւը և բոլոր այն մանկական հիւանդութիւնները, որոնք ամեն տարի միլիոնաւոր զոհեր են խլում մարդկութիւնից։ Մենք չենք յիշատակում այլ ևս այն հիւանդութիւնների մասին, որոնք ընդհանուր անունով կոչւում են մրսողական հիւանդութիւններ (րեւմատիզմ, թոքերի բորբոքումն և այլն), որոնք նունակս ահազին քանակութեամբ զոհեր են տանում։ Այդ հիւանդութիւններից մի քանիսը, օրինակ հարինքը, առաջացնում են մի շարք այնպիսի խորին փոփոխութիւններ մարդու կազմաձքի մէջ, որ նւազեցնում կամ բոլորովին ոչնչացնում են նորա որդենութեան կարողութիւնը։

Բայց սերհատութեան տեսակէտից աւելի կարևոր են այն քրոնիկական հիւանդութիւնները, որոնք ժառանդաբար փոխադրում են մէկ սերնդից միւս սերնդին և որոնք սովորաբար անւանում են ժառանդական հիւանդութիւններ։ Այդ կարգի հիւանդութիւններիցն են սիֆիլիսը, թոքախորը, ուրկութիւնը (պրօկազա), անգլիական ախտը (ոսկորների հիւանդութիւն), գեղձախորը (զօլուցա, scrofulosis) և վերջապէս հողեկան ու ջղային բազմատեսակ հիւանդութիւնները։ Այդ բոլորը ոչ միայն հալում ու մաշում են անհատի կազմաձքը, այլ և, ժառանդաբար անցնելով որդիներին, առաջ են բերում մի շարք թոյլ, հոգեկիս և փիղիքապէս անզարդացած, հիւանդ և ախտաւոր սերունդ, որը միանդամայն անընդունակ լինելով դրութեան կուի համար, սերհատում, ոչնչանում է։

Այդ հիւանդութիւնների նշանակութիւնը աւելի ևս մեծանում է, երբ մոտաբերենք, որ նրանք սարսափելի կերպով տարածւած են աշխարհի բոլոր կողմերում, ինչպէս հիւսիսային սառուցապատ բևեռներում, այնպէս և արևակէղ հասարակածի տակ։

Ուռասաստանում ամբողջ նահանգներ, ինչպէս են Վոլգայի վերին մասերում գտնող նահանգները, համարեա ամբողջապէս վարակւած են սիֆիլիսով. նոյնը կարելի է ասել նաև եւրոպական տէրութիւնների, մանաւանդ Բալթեան և Ալրիական ծովերի ափերում գտնող երկների վերաբերութեամբ<sup>1)</sup>: Մեզանում ևս, առաւել Անդրկովկասեան երկաթուղու բացումից յետով, սիֆիլիսը արագ քաղցրով կասեան տարածւել, չինայելով նոյն իսկ հեռաւոր դիւզերը: Բժիշկ Պանտիլիսովի ասելով, Դաղստանի մի քանի մասերը կատարելապէս սերնատում են ժառանգական սիֆիլիսի պատճառով:

Ինչ որ վերաբերում է թոքախտին, պրոֆէսոր Հիրշի վկայութեամբ աշխարհի բոլոր մեռնողների<sup>2)</sup>, մասը զոհ է գնում այդ հիւանդութեան<sup>3)</sup>:

Իսկ հոգեկան և ջղային հիւանդութիւնները այն աստիճան տարածւած են, որ շատերը իրաւամբ անւանում են մեր 19-րդ դարը ջղային դար, մի դար՝ որի յատկանիշն է «չա viel Nerven, aber zu wenig Nerv—շատ ջղեր, բայց շատ սակաւ առողջ ջղեր»: Ուշադրութեան արժանի է այն երեսովթը, որ բոլոր այդ հիւանդութիւնները առաւելապէս տարածւած են քաղաքակիրթ ազգերի մէջ, ուր, պրոֆեսոր Տուրնովսկր ասելով, «цивилизация въ сибирской земле» ուդյուր ոօն րցեց—քաղաքակիրթութիւնը և սիֆիլիսը ձեռք ձեռքի աւած են առաջ գնումն: Այդ ճշմարիտ է մանաւանդ հոգեկան և ջղային հիւանդութիւնների վերաբերութեամբ, որոնք տարեցտարի աւելի և աւելի խոր արմառներ են ձգում քաղաքակիրթ ազգերի մէջ: Հոգեկան հիւանդների թիւը ներկայ դարում 2—3 անգամ աւելի է, քան թէ անցած տասնեւութերորդ դարում:

Այդ տիսուր երեսովթը բացատրում է կենսական այն նուրբ և բարդ պայմաններով, որ ստեղծում է ժամանակակից քաղաքակիրթութիւնը և որոնց շնորհիւ գոյութեան կոիւը օրէցօր աւելի և աւելի դժւար է դառնում: Այդ կոիւը Անձ մասամբ ծանրանում է ջղերի և ուղեղի վրայ, որոնք ստիպւած լինելով գտնելի անդադար դրզումն և լարւած դրութեան մէջ, վերջ ի վերջոց թուլանում,

<sup>1)</sup> Տես Փրօֆ. Գե—Կյորս Վեներիչ. Եղիշեալ երես, 543.

<sup>2)</sup> Տես Թիխորեստъ—Частная патологія т. IV. երես 239.

ջլատում են և առաջնորդում մարդու կազմաձքը զէպի սերհատութիւնը ժամանակակից մարդը, ասում է Կրախտէրինդը, դեռ ևս զպրոցական մատող հասալից ստիպւած է տեղի տալ գոյութեան կուի պահանջներին. իսկ մրցումը զիտութեան, արւեստների և վաճառականական ասպարէզի վրայ, միացան հարասանալու և զւարճանալու անյագ ցանկութեան հետ, ստիպում են ժամանակակից հասարակութեան լարել իւր ջղային բոլոր ոչժերը, գրգռել ուղեղի բոլոր զօրութիւնը<sup>1)</sup>:

## Ա

Ուղեղի և ջղերի գրգռման մեծապէս նպաստում են մի շարք թողներ, որոնց գործածութիւնը օրէցօր աւելի և աւելի տարածում է: Այդ թողներն են թէյը, սուրճը, ծխախոտը, օպիումը, օղին և առհասարակ բոլոր նարկոտիկական միջոցները և ոգելից ըմպելիները: Այդ թողների տարածումը պատահական երկոյթ չէ այլ նշան է այն չափազանց գրգռման, որը գոյութեան կոխւը պահանջում է ժամանակակից մարդուց: Եւ եթէ այդ բոլոր միջոցների չափաւոր գործածութիւնը ժամանակաւոր կերպով նպաստում է հոգեկան և ջղային կարողութիւնների պահպանման, ընդհակառակը՝ նրանց չափազանց կար յարատե գործածութիւնը ջլատում է այդ կարողութիւնները և պատճառ է լինում ամբողջ կազմաձքի քայլքայման:

Աւելի տարածւած, հետեաբար աւելի վնասակար են ոգելից ըմպելիները, որոնց գործածութիւնը, ինչպէս յայտնի է, պատճառ է դունում ամբողջ ցեղերի սերհատութեան: Եւ բոպացիները համարեա միայն օղիի միջոցով բնաջինջ արին Ամերիկայի բնիկներին, տարածելով նրանց մէջ սաստիկ հարբեցողութիւն: Նոյն հարբեցողութեան զոհ են են գնում նաև հին և նոր աշխարհների բևեռային ցեղերը, Աֆրիկայի և Աւստրալիայի կիսավայրենիները: Բայց և քաղաքակիրթ երկիրներում ինչպէս օրինակ Ռուսաստանում<sup>2)</sup> և

<sup>1)</sup> Կրաֆտ-Թինգը.—Պսիխատրիք, տ. I, էջ 157.

<sup>2)</sup> Աւրոսպական Ռուսաստանում 1889 թ. գործ է ածւած 25,140,774 վեդրո անխառն սպիրո: Հաշւելով բնակիչների թիւը 99,656,336, ամեն մի հոգուն ընկնում է ¼, վեդրո անխառն սպիրո կամ մոտ ¾ վեդրո 40° օդի: տես Եշերոնիկ Մանկութ Փունակ. Վայպ. XVI, 1889 թ.

նոյն իսկ Եւրոպակում հարբեցողութիւնը դարձել է ընդհանուր ժողովրդական աղքտ, որի դէմ գեռ չեն կարողանում յաջողութեամբ մաքառել գիտութիւնը և օրէնսդրութիւնը:

Մաղնուս Հուսի, Մորէլի, Լանսէրօի, Լիբիլի, Մանիանի, Բէրի, Կոմբէմալի, Կովալեվսկու և ուրիշ շատ զիտնականների բազմաթիւ և բազմակողմանի ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս որ ոչ մի բան այնպէս չէ նպաստում հոգեկան և ջղային հիւանդութիւնների զարգացման—ինչքան հարբեցողութիւնը: Սպիրտը ենթարկում է ուղեղը և մարմնի բոլոր հիւածքները մի շարք այնպիսի փոփոխութիւնների, որոնց վերջնական հետևանքը լինում է անդամալուծացին խելացնորութիւն (պարալիտիկու օլաբում) և կազմածքի ընդհանուր ծիւրումն: Օղիի ամեն մի կաթիլը, որ մտնում է մարդու կազմածքի մէջ՝ մի մուրհակ է կեանքի մնացած օրերի հաւարասում է նշանաւոր քիմիկոս Լիբիլը:

Իայց աւելի ցաւալի է այն ազդեցութիւնը, որ հարբեցողութիւնը անում է սերնդի վրայ: Հարբեցողների զաւակները մեծ մասսամբ լինում են ապուշներ, խելացնորներ և ջղացիններ. նրանցից շատերը (համարեա <sup>4, 5</sup> մասը) մեռնում են, նոյն իսկ մանկական հասակում. իսկ մնացածները սովորաբար ենթակաց են լինում իստերիկացի, ընկնաւորութեան (падучая болезнь, әпілепсія) և անդամալուծութեան <sup>1)</sup>: Բժ. Մարսէնը ուսումնասիրելով Պարիզի Սալպէտրիէր անւանւած նշանաւոր հիւանդանոցում 83 ատուշ մանուկների կեանքը՝ գտաւ որ նրանցից 60-ը հարբեցողների զաւակներ են: Մարսէն ճանաչում էր մի հարբեցող ընտանիք, որի 16 զաւակներից 15-ը մեւան փոքր հասակում ջղաձգութիւնից (коңвүլսія), իսկ միակ կենդանի մնացածը ենթարկեց ընկնաւորութեան:

Հարբեցողութիւնը զարմանալի կերպով նպաստում է նաև բարոյական զգացմունքների անկման. այդ է պատճառը, որ յանցաւորների ամենամեծ տոկոսը կազմում են հարբեցողները կամ հարբեցողների զաւակները: Պարիզի վիճակադրական բիւրօի կառավարիչ Խերնէսի հաշւից երեսում է, որ երբ ֆրանսիայում հինգ տարւայ ընթացքում ոգելից ըմպելիքների դործածութիւնը բարձրա-

<sup>1)</sup> Տես Combemale—La descendence des alcooliques.

ցաւ 3,53 լիտրից մինչև 3,83 լիտր իւրաքանչիւր բնակչին, նոյն ժամանակամիջոցում յանցաւորների թիւն էլ 172,000-ից բարձրացաւ մինչև 195,000-իւ Ըսդհակառակը Շեղիայում հինգ տարւաց ընթացքում—(1838—1842) ոգելից ըմպելիքների գործածութիւնը կիսով չափ պահասելով, յանցաւորների թիւը նոյնպէս իջաւ 64,520-ից 47,000-իւ

Յրէրինդը, Ռիւրը և Դէմոնն ցոց տւին, որ նոյն խոկ հարբեցողութիւնից ազատ ծնողների զաւակները վերին աստիճանի ենթակաց են դառնում ջղացին և հոգեկան հիւանդութիւնների, եթէ որ նրանց լցութիւնը տեղի է ունեցել հօր կամ մօր պատահական կերպով հարբած ժամանակ<sup>1)</sup>:

Մորէլլ և Դարեինը ընդունում են, որ հարբեցողների ցեղը սերհատում է ամենաուշը չորրորդ սերնդում: Մորէլլ հետեւեալ կերպով է դասաւորում այդ չորս սերունդները: Առաջին սերունդ—բարոյական զգացմունքների անկումն և յարատե հարբեցողութիւն: Բ. սերունդ—պարբերական խելացնորութիւն և անդամալուծութիւն: Գ. սերունդ—մելամաղձութիւն, կեանքի առելութիւն, ինքնասապանութիւն և ոճրագործութիւն: Դ. սերունդ.—ապշութիւն, յիմարութիւն և ընտանիքի սերհատութիւն:

Ազգպիսով խորին իմաստ են ստանում Ա. Գրքի այն խօսքերը թէ «ձեր հայրերի մեղքերի համար ես վրէժ կ'առնեմ ձեզանից մինչև երրորդ և չորրորդ սերունդը»:

Ողելից ըմպելիներից յետոյ գալիս են նարկոտիկական թոյները, որոնցից աւելի վեասակար են օպիումը, հաշիշը և մորֆինը: Թէյի, սուրմի և ծխախոտի վրայ կանգ չենք առնում, որովհետեւ նրանց ազդեցութիւնը սերհատութեան տեսակէտից դեռ մանրամասն կերպով ուսումնասիրւած չէ. սակայն աչքի առաջ ունենալով այն սաստիկ թոյները, որոնք պարունակւում են՝ օրինակ ծխախոտի մէջ (նիկոտին և ցիանի թթւատ), պէտք է կարծել որ նրանց գործածութիւնը յամենայն դէսու չի կարող մնալ առանց խորին ազդեցութեան մարդու կազմաձքի վրայ: Օպիումի գործածութիւնը սաստիկ տարածւած է Զինաստանում, Պարսկաստանում,

<sup>1)</sup> Տես Կրաֆտ Ե-Թ Բ Ի Ի Ր Ե.—օր. ս. տ. I. եր. 183.

Տաճկաստանում և առհասարակ բոլոր այն արևելեան երկրներում, որտեղ տիրապետում է մահմեդականութիւնը: Հաշիշը, որ ստացւում է հնդկական կանեփից, տարածւած է Հնդկաստանում, իսկ մորֆինը՝ որ պատրաստում է օպիումից և կազմում է նրա բաղկացուցիչ մասերից ամենազտւածը, գործածական է քաղաքակիրթ ազգերի մէջ և այն էլ գլխաւորապէս հասարակութեան բարձր կոչւած շրջաններում: Օպիումը, որ Պարսկաստանում անւանւում է թիրիաք, իսկ Տաճկաստանում աֆին, գործ են ածում կամ ուղղակի ներս ընդունելով և կամ ծխում են զալիաններով: Պարսկաստանում տարածւած են առանձին տներ, որտեղ ժողովուրդը յաճախում է յատկապէս թիրիաք ծխելու համար: Այդ տները, ինչպէս և օպիումի գրգռիչ ազդեցութիւնը, գեղեցիկ կերպով նկարագրուած են Բաֆֆիի պարսկական նամակներում, ուր և յզում ենք ընթերցողներին:

Բոլոր այդ թոյները սաստիկ կերպով գրգռում են ջղացին և ուղեղացին սիստեմը, վառում են երեակայութիւնը մեծ մասամբ վաւշոտ պատկերներով, ծիւ բում են ամբողջ մարմինը և պատճառ են դառնում վաղահաս ծերութեան և բեռական զգացմունքների թթութեան: Նրանց ենթակայ եղող անհատները կամ բոլորովին անընդունակ են դառնում որդեռնութեան և կամ նրանցից ծնւած սերունդը լինում է թոյլ, հիւանդոտ, ջղացին և վերջ ի վերջոյ սերհատում է, ինչպէս և արբեցողների սերունդը:

## Զ

Այդպիսով թոյլ և ախտաւոր սերունդների թիւլ օրէցօր սկսում է շատուանալ և մարդկութիւնը աւելի և աւելի մօտենում է սերհատման վիճակին: Այդ տիսուր ապագայի առաջն առնելու համար հարկաւոր է կամ ժառանդականութեան ոյժը թուլացնել, մոցնելով հիւանդ տոհմի մէջ թարմ և առողջ արիւն, կամ բոլորովին արգելել ամուսնութիւնը ժառանդական հիւանդներին: Եւրոպայում և նոյն իսկ Ռուսաստանում սկսել է յաճախ և յաճախ արծարծել այն միտքը թէ անհրաժեշտ է ամուսնացողներին նախապէս ենթարկել բժշկական քննութեան և թոյլ տալ ամուսնանալու միմիայն այն անհատներին, որոնք ընդունակ են առողջ սերունդ առաջաց-

նելու: Եւ իսկապէս եթէ նոյն իսկ հասարակ գործերի համար այսօր ամեն տեղ պահանջում են բժշկական, ծննդական և այլ վկայականներ, որչափ ևս առաւել անհրաժեշտ է այդ այնպիսի նշանաւոր և ծանրակշիռ խնդրում ինչպիսին է առողջ սերունդ արտադրելու խնդիրը:

Խնչ որ վերաբերում է սերնդի մէջ թարմ և առողջ արիւն պահպաններու խնդրին, այդ կարող է կատարւել միմիայն սեռական ընտրողութեան միջոցով, որը, ինչպէս փորձով ցոյց տվեց Դարւինը, կատարեալ հրաշքների է դործում բուսական և կենդանական թագաւորութիւնների մէջ, բարուքելով նրանց տեսակները: Սակայն ժամանակակից հասարակական ախտերից մէկն էլ հէնց այն է, որ սեռական ընտրողութեան տիեզերական սկզբունքը ներկայ քաղաքակիրթ ազգերի մէջ տեղի է տւել աւելի չնչին, աւելի ստորին սկզբունքների: Ամուսնութեան խնդիրը դառել է փողի և կարիէրի խնդիրը. սերնդի ապադայի հարցը տեղի է տւել նիւթական նեղ և գձուճ շահերին: Հարուստ կամ դիրք ունեցող ծնողների ազջիկը, ինչքան էլ որ նա լինի ֆիզիոլոգիապէս պակասաւոր, միշտ գտնում է իւր համար փեսայ, ինչպէս և թոքախտաւոր, ապուշ, սիֆիլիտիկ դրամատէրը գտնում է իւր համար կին: Սորա հետեւանքը լինում է այն, որ հարուստ և նշանաւոր տոհմերը երրորդ կամ չորրորդ, յաճախ նոյն իսկ երկրորդ սերնդում, արդէն սերհատում, ոչնչանում են:

Այդ բանին մեծապէս նպաստում է նաև ամուսնութիւնը մօտաւոր ազգականների մէջ, որով տոհմը զրկուում է իւր մէջ թարմ արիւն ընդունելու միջոցից<sup>1)</sup>: Առհասարակ նկատւած է որ թէ կենդանիների, թէ մարդոց և թէ նոյն իսկ բոյսերի մէջ արիւնակից ամուսիններից ծնւած զաւակները լինում են աւելի թոյլ և աւելի ենթակայ զանազան հիւանդութիւնների: Բորբարը, ուսումնասիրելով<sup>2)</sup> արիւնակից ամուսնութիւններ, գոտա որ նրանցից սերւած 95 երեխաներից 24-ը ապուշներ էին, մէկը խուլ,

<sup>1)</sup> Տես Darwin—Ehen Blutsverwandter; Devay—Du danger des mariages consanguins. 1857.

<sup>2)</sup> Տես Beauregard—Annales d'hygiène 1862 և 226.

մէկը թզուկ և 37-ը վիզիքական այլ և այլ պահասութիւններով<sup>1)</sup>: Բէմիսը գտաւ որ ազգակից ամսւսիններից ձնւած 3822 զաւակներից 1113-ը՝ ալսինքն 29<sup>0</sup> օ-ը՝ պահասաւորներ էին, որոնցից 306 ապուշներ, 142 խուլ ու համրեր, 60 ընկնաւորներ և 36 խելացնորներ<sup>2)</sup>: Այդ տեսակէտից մեր եկեղեցու այն օրէնքը, որ արգելում է ամուսնութիւնը ազգականների մէջ հինգերորդ և մինչև անգամ եօթերորդ սերնդից առաջ, ունի խորին կենսաբանական հիմք:

Քանի որ սկսեցինք շօշափել ընկերական պայմանները՝ կանգ առնենք երկու նշանաւոր հասարակական չարիքների վրայ, որնք խսկապէս ջլատում են ազգերի ուժերը և արգելք են դառնում մարդկացին կազմւածքի ազատ և կանոնաւոր զարգացման: Այդ չարիքներն են—դրամապետութիւնը և ռազմապետութիւնը (կապիտալիզմը և միլիոնարիզմը): Կապիտալը ծնունդ է ուել գործաւորների դասակարգին, որը այսօր կազմում է Եւրոպայի ամբողջ բնակչութեան համարեա կէս մասը և որը գոյութեան կուին դիմանալու համար սոհիպւած է ծանրաբեռնել իւր կազմւածքը ոյժից վեր աշխատութիւնով: Ցասից մինչև տասնեւհինդ ժամ ամենօրեայ ծանր և միօրինակ աշխատանքը, որ պահանջում է դրամապետութիւնը ժամանակակից գործաւորներից, մի կատարեալ բնաբարութիւն է մարդկացին կազմւածքի վրայ, որ Դանդաղ, բայց անսալթաք կերպով առաջնորդում է մարդուն դէպի վաղահաս գերեզման: Նէւէլի հաւաքած վիճակագրութիւնից երևում է, որ արհեստաւոր դասի կեանքը <sup>1/8-ով</sup> աւելի կարճ է, քան թէ ունեոր և ապահովւած դասակարգի անձանց կեանքը: Այդպէս օրինակ մինչեւ դաստարները և փաստաբանները միջին հաշով ապրում են մինչև 63 տարի, հոգեւորականները մինչև 68 տարի, տպարանի գործաւորների և դրաշարների միջին կեանքը չէ անցնում 39 տարուց աւելի, իսկ քանդակիչները և վիմագիրները մեծ մասամբ մեռնում են 30—35 տարեկան հասակում: Աւելի ևս սարսափելի է գործարանների, հանքերի և այլ բանւորների դրութիւնը, որոնք աշխատում են փակ և վարակւած օդի մէջ, ենթարկելով

<sup>1)</sup> 8th Med. chir. Review, July, 1860.

իրենց կեանքը և ջրի և տաքի և պաղի անդադար ազդեցութեան բնական է, որ մարդկացին կազմւածքի վրայ կատարւող այդ բանաբարութիւնը տեղիք է տալիս մի շարք պահանջների, որոնց նպատակն է, խնայել մարդկացին ոյժերը և թեթեացնել գոյութեան կոիւը մարդկութեան այդ սոււար բազմութեան համար ժամանակակից բանւորների պահանջն է ութ ժամ՝ աշխատութիւն և ութ ժամ՝ քուն։ Եւ առողջապահական դիտութիւնը արդարացնում է այդ պահանջը, ապացուցանելով, որ ութ ժամւայ ազատութիւնից և ութ ժամւայ քնից չետոց մարդկացին ոյժը կարող է մնացած ութ ժամւայ մէջ նոյնչափ արոիւնք արտադրել, ինչքան ներկայ պայմաններում արտաէրում է 12—15 ժամւայ ընթացքում։

Եթէ գրամագետութիւնը խորակում է գործաւորների կեանքը, ենթարկելով նրանց չափազանց ֆիզիքական աշխատանքի, միևնուն ժամանակ նա քայլքացում է նաև գրամատէրների կազմւածքը, անդադար լարելով նրանց ջղերը, գրգռելով նրանց ուղեղը օրէցօր դժւարացող մրցման համար և վերջապէս ենթարկելով նրանցից շատերին մաշող և սպանող մոլութիւնների։ Այդպիսով կապիտալիզմը ներկացացնում է մի երկասցըրի սուր, որ մի կողմով հարւածում է գործաւորներին, միւս կողմով դրամատէրներին, իսկ երկու կողմով ևս մղում է մարդկութիւնը դէպի վաղաժամ սերհատութիւն։

Դրամապետութեան ծնունդն են նաև մեծ քաղաքների այն բազմաթիւ բնակիչները, որոնք գործաւորների հետ միասին կազմում են պրոլետարիատ դասակարգը և որոնց թիւը սարսափելի արագութեամբ բազմանում է։ Քաղաքները իրանց նեղ և ազտոտ բնակարաններով, վարակւած և փչացած մթնոլորտով կազմում են բարեյաջող միջավայրեր մի շարք վարակիչ հիւանդութիւնների համար, որոնց զոհ է զնում պրոլետարիատը հազարներով և հարիւր հազարներով։ Հազարները մեռնում, ոչնչանում են և նրանց փոխարէն գիւղերից գալիս են նոր և թարմ հազարներ միևնոցն վիճակին ենթարկելու համար։ և այդպէս շարունակւում է անընդհատ ֆրանսիացի ազգաբնակութեան  $\frac{2}{5}$  մասը արդէն ապրում է քաղաքներում։ իսկ Անգլիայում քաղաքացիների թիւը աւելի է քան թէ գիւղացիներինը։

Այդ ամենին հետեւում է բարոյականութեան անկումը, որը պաւագութեան ու շճագործութեան արանքից առաջնորդում է ազգերին դէպի վաղահաս ծերութիւն և դէպի գերեզման:

Դրամակետութեան չարիքներից անցնենք ռազմապետութեան այսինքն պատերազմին և պատերազմի պատրաստութիւններին: Ինու ևս խաղաղութեան ժամանակ միմիայն եւրոպական տէրութիւնները պահում են մշտական մօտ 5,000,000 զինւոր, որոնց թիւը պատերազմի ժամանակ կարող է կրկնապատկւել, եռապատկւել և մինչեւ անզամ քառապատկւել: Այդ հինգ միլիոնը կազմում են ժողովրդի ամենազօրեղ և առողջ տարրը: Եւ ահա այդպիսի մի տարր, փոխանակ արդիւնաբերելու, փոխանակ սերունդ առաջացնելու՝ ենթարկում է զինւորանոցների փշացած օդի և հակառառողջապահական պայմանների ազդեցութեան և յաճախ զո՞ն է դառնում այլ և այլ մոլութիւնների: Իսկ պատերազմի ժամանակ նրանք զո՞նում են հարիւր հազարներով և իրանց հետ միասին զրկում են մարդկութիւնը այն ամուր սերնդից, որ կարող էր առաջանալ մի այդպիսի զօրաւոր տարրից: Ֆրանսիան միմիայն նապոլէօն առաջնի պատերազմների ժամանակ զո՞նել է 1,350,000 հոգի. իսկ Եւրոպան յիսնական թւականներից սկսած կորցրել է ամենաքիչը միլիոնուկէս երիտասարդ ու առողջ զինւորներ:

Բայց միայն այդ չէ միլիոնարիզմի զո՞նը: Արնդոփի<sup>1)</sup> հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ ոչ մի զբաղմունք այնպէս չէ նպաստում ջղային և հոգեկան հիւանդութիւնների զարգացման, ինչպէս զինւորականութիւնը: Եւ այդ շատ հասկանալի է, աչքի առաջ ունենալով մի կողմից այն զրկանքները և ծանրութիւնը, որոնց զինւորը ենթակայ է խաղաղութեան ժամանակ, և միւս կողմից այն սարսափներն ու ջղային լարւած դրութիւնը, որոնց նա ենթարկում է կուիւների մէջ: Մենք չենք յիշում այլ ևս այն բարոյական ու տնտեսական վնասների մասին, որոնց ենթարկում է ամրող հասարակութիւնը պատերազմի ժամանակ և որոնք հաւասարապէս ծանրանում են թէ յաղթողների և թէ յաղթողների վրայ:

<sup>1)</sup> Տես Առնդտ—Zeitschr. f. Psych. 30 p. 64.

Սրանք են ահա այն դլխաւոր պայմանները, որոնք նպաստում են մարդկացին ցեղի սերհատութեան և որոնց ազդեցութիւնը արգէն նկատելի է ժամանակակից սերնդի վրայ։ Ալֆրէդ Ռոլլէս, Հալտոն, Գրանտ-Ալլէն և ուրիշ կենսաբանները միաբերան վկայում են, որ եւրոպական ցեղերը նկատելի կերպով մանրանում և վատթարանում են, այսինքն գտնուում են սերհատութեան ճանապարհի վրաց<sup>2)</sup> Այդ պատճառով վերոչիշեալ պայմանների ուսումնասիրութիւնը հարկաւոր է ոչ միայն իրեւ լոկ գիտական խնդիր, այլ և նրա համար որ կարելի լինի առնել նրանց վնասակար հետևանքների առաջը և միջոց տալ մարդուն աւելի տոկունութեամբ պաշտպանել իւր կեանքը գոյութեան օրհասական կուի մէջ։

Այսուեղ ակամաց հարց է ծագում թէ՝ ի՞նչ օգուտ այդ պայմանների ուսումնասիրութիւնից և նրանց դէմ մաքառելուց, քանի որ գիտութիւնը արգէն նախապէս կարդում է իւր դատավճիռը մարդկութեան անխուսափելի վախճանի մասին։ Սակայն ուրիշ բան է բնական մահը և ուրիշ՝ կանխահաս մահը։ Միթէ այն հանգամանքը, որ ամեն մարդ մահկանացու է, արգելք է լինում մեզ կուել հիւանդութիւնների դէմ, մաքառել վաղահաս մահւան դէմ ինչքան որ բնական և անխուսափելի է մահը, նոյնչափ ևս բնական է մահւան դէմ մաքառելը, գոյութեան համար կուիլը։ Եւ չէ որ հէնց այդ կուիւն է, որ անւանուում է կեանք և որը իմաստ ու խորհուրդ է տալիս ինքն ըստ ինքեան աննպատակ գոյութեան։

Եւ նվ զիաէ, երբ ներկայ մարդկացին ցեղի համար կը հնչէ բնական մահւան ժամը, գուցէ մարդկութեան դիակի տակից կը ծլի մի ուրիշ կենդանական տեսակ, որ աւելի արժանի կը լինի կրել ընութեան թագաւորից կոչումը և անւանւել «պատկեր Աստուծոյ»։

<sup>2)</sup> Оболенский—Биологи о женскомъ вопросѣ. Русская Мысль 1893 № 2